«ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ»
ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆԻ ՏՆՕՐԵՆ՝
Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
---
15. 06. 2026թ.

ԿԱՐԾԻՔ

ԱՌԱՋԱՏԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

ԺԵՅՈՒ ՍՈՆԳԻ «ԱՆՁՆԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՆԵՐԳՐԱՎՎԱԾՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՈՒՍԱՆՂՆԵՐԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՐԵԿԵՑՈՒԹՅԱՆ ՄԵՋ» ԺԹ.00.01 ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՄԲ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՀԱՅՑՄԱՆ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բարձրագույն կրթության համակարգում ուսանողների հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրը ավելի է կարևորվում հետազոտողների, բուհերի քաղաքականություն մշակողների կողմից վերջին ժամանակներում: Ավանդաբար, բարձրագույն կրթական հաստատությունները ուսանողների հաջողությունը դիտարկում էին հիմնականում ակադեմիական առաջադիմության, ինչպիսիք են ՄՈԳ-ը (GPA), տեսանկյունից: Ժամանակակից մոտեցումները կարևորում են ուսանողների հոգեկան առողջությունն ու հոգեբանական բարեկեցության հարցերը՝ կապված ուսումնառության արդյունքների, ակադեմիական ներգրավվածության, ուսումը շարունակելու և երկարաժամկետ կտրվածքով մասնագիտական զարգացման և կարիերայի կառուցման հարցերի հետ: Առանցքային նշանակություն ունի ուսանողների ներգրավվածության հիմնախնդիրը, որը հանդես է գալիս միջնորդավորող օղակ՝ կապելով ուսանողի մոտիվացիան բուհական միջավայրի հետ: Կարծում ենք, որ ուսանողների ներգրավվածության գաղափարը ավելի ընդգրկուն և համապարփակ է, քան ուղղակի

ուսանողների մոտիվացվածությունը, ինչը սովորաբար առավել շատ է քննարկվում մեզանում:

Վերոնշյալից ելնելով՝ սույն հետազոտությունը տրամադրում է ժամանակակից և մշակութային տեսանկյունից կարևոր վերլուծություն հայաստանյան բարձրագույն կրթության համատեքստում՝ յուրովի ձևով քարտեզագրելով ուսանողների բարեկեցության բազմագործոն կանխորոշիչները:

Ատենախոսության առաջին գլխում համակարգված կերպով վերլուծվում են հոգեբանական բարեկեցության տեսական և կիրառական մոտեցումները, ինչպես նաև հոգեբանական բարեկեցության հիմնախնդիրը բարձրագույն կրթության համակարգում ուսանողների ուսումնական գործունեության համատեքստում: Ատենախոսության երկրորդ գլխում վերլուծվում են ուսանողների բարեկեցության սոցիալ-հոգեբանական, համատեքստային և անհատական կանխորոշիչները: Ուսանողների ներգրավվածությունը ներկայացվում է որպես բազմաբաղադրիչ երևույթ, որն ընդգրկում է ակադեմիական ակտիվությունը, ուսումնական ջանքը, դասերին մասնակցությունը, համառությունը, ինչպես նաև սոցիալական շփումները, համակուրսեցիների և դասախոսների հետ կապերը և համալսարանական համայնքի հետ պատկանելության զգացումը: Որպես անհատական տարբերություններ քննարկվում են վարքի դրդապատճառային և սոցիալ-կոգնիտիվ փոփոխականները՝ անդրադարձ անելով *կարգավորման կողմնորոշման* և *աճին միտված մտածելակերպի* տեսություններին: Ատենախոսության երրորդ գլխում ներկայացված են երկու անկախ ուսումնասիրությունների մեթոդաբանությունը, արդյունքների վիճակագրական վերլուծությունը և մեկնաբանությունը: Առաջին ուսումնասիրությունը վերաբերում է աճին միտված մտածելակերպի և վարքի կարգավորման կողմնորոշումների կանխորոշիչ դերին, իսկ երկրորդը՝ ակադեմիական և սոցիալական ներգրավվածության դերին ուսանողների հոգեբանական բարեկեցության մեջ: Երկու հետազոտությունների արդյունքների համեմատությունը ցույց է տալիս, որ ուսանողների հոգեբանական բարեկեցության պահպանման համար հավասարապես կանխորոշիչ նշանակություն

ունեն ինչպես վարքային՝ միաջավայրով պայմանավորված, այնպես էլ անհատական տարբերություններով պայմանավորված գործոնները:

Աշխատանքում բացի եզրակացություններից ներկայացված են նաև գործնական առաջարկություններ, որոնք ուղղված են կանխարգելման և ձախողումից խուսափման պրակտիկաների նվազմանը և ուսանողների ինքնազարգացման, ձեռքբերման, ակադեմիական իմաստավորման և համալսարանական միջավայրում ակտիվ մասնակցության ռազմավարությունների մեծացմանը ուսանողների հետ աշխատանքում:

Ատենախոսության մեջ ձևակերպված է նորույթը, տեսական և կիրառական նշանակությունը, պաշտպանության ներկայացվող դրույթները, որոնք բխում են եզրակացություններից, ինչը հիմնավորում է այն, որ ատենախոսությունը ամբողջական և ավարտուն աշխատանք է: Ատենախոսության հետ ներկայացվող սեղմագիրը ամբողջովին արտացոլում է ատենախոսության բովանդակությունը, հիմնական դրույթները և եզրակացությունները: Միևնույն ժամանակ, ցանկանում ենք ներկայացնել որոշ դիտարկումներ և ցանկություններ:

1. Ադյունքների վերլուծությունը իրականացվել է պատճառահետևանքային կապերի դուրսբերման տրամաբանությամբ, որտեղ ուսանողների ակադեմիական ներգրավվածությունը առավել շատ, իսկ սոցիալական ներգրավվածությունը առավել քիչ պայմանավորում են ուսանողների հոգեբանական բարեկեցությունը: Շատ հավանական է, որ հարաբերությունները լինեն երկկողմանի կամ հակադարձ: Օրինակ՝ ուսանողը, ով համալսարան է ընդունվում արդեն իսկ բարձր հոգեբանական բարեկեցությամբ և հուզական կայունությամբ, ունի անհրաժեշտ հոգեբանական ռեսուրս՝ ակտիվորեն ներգրավվելու ակադեմիական ոլորտում: Ընդհակառակը, ցածր բարեկեցություն, հետևաբար և բարձր տագնապայնություն ունեցող ուսանողն ինքնաբերաբար հնարավոր է ունենա նվազ ակադեմիական և սոցիալական ներգրավվածություն: Ցանկալի կլիներ, որ արդյունքների քննարկման մասում վերոնշյալ պատճառահետևանքային կապը հիմնավորվեր այլ ուսումնասիրությունների արդյունքներով:

2. Ռեգրեսիոն վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ ակադեմիական բարձր ներգրավվածություն ունեցող իգական սեռի ուսանողները դրսևորում են ցածր հոգեբանական բարեկեցություն, հետևաբար զգում են տագնապայնության բարձր մակարդակ և կրթական սթրես: Այս արդյունքը հետաքրքրական է, քանի որ ցույց է տալիս գենդերային տարբերություններ անգամ հոգեբանական բարեկեցության տեսանկյունից, սակայն կարծում ենք մեկնաբանության մեջ բավարար կերպով չի քննարկվում, թե ինչպես են սոցիալ-մշակութային և/կամ գենդերային դերային ակնկալիքները պայմանավորում այս պատկերը:

3. Առաջին ուսումնասիրության ռեգրեսիոն վերլուծության մեջ առկա ուսուցման ձևը կանխարգելման դրդապատճառային ֆոկուսի հետ նվազեցնում է հոգեբանական բարեկեցությունը, իսկ աճին միտված մտածելակերպը և ձգտման մոտիվացիան՝ մեծացնում հոգեբանական բարեկեցությունը: Կարծում ենք, որ առկա ուսուցման բացասական դերը այս վերլուծական մոդելի մեջ բավականաչափ քննարկված չէ: Ցանկալի կլիներ, որ ստացված արդյունքները ավելի հիմնավոր կերպով մեկնաբանվեին արդյունքների քննարկման հատվածում, իսկ միգուցե հասկանալու համար այս կապերը անհրաժեշտ էր հավելյալ վերլուծություն:

Նշված դիտարկումները չեն ստվերում գիտական աշխատանքի արժեքը. այն ունի հստակ տեսական և գործնական նշանակություն:

Հաշվի առնելով թեմայի այժմեականությունը, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, գիտական հավաստիությունը, եզրահանգումների հիմնավորվածությունը՝ Ժեյու Սոնգի «Անձնային առանձնահատկությունների և ակադեմիական ներգրավվածության դերը ուսանողների հոգեբանական բարեկեցության մեջ» թեմայով ատենախոսությունը համարվում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին համապատասխան, այսինքն՝ ընդհանուր հոգեբանության, հոգեբանության տեսության և պատմության, անձի հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում, իսկ Ժեյու Սոնգը արժանի է հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը

ԺԹ.00.01 «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ:

Աշխատանքի վերաբերյալ կարծիքը և եզրակացությունները քննարկվել են ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության և կրթական գիտությունների ամբիոնի 15.06. 2026թ. նիստում:

Քննարկմանը մասնակցում էին ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի հոգեբանության և կրթական գիտությունների ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Նաիրա Հակոբյանը, հոգեբանական գիտությունների դոկտոր Ռուբեն Նաղդյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Վազգեն Պողոսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիաննա Ավետիսյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Մարիամ Մեհրաբյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու Անժելիկա Այվազյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Աննա Խաչատրյանը, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արա Ֆիրյանը, հոգեբանական հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմինե Մուրադյանը, ամբիոնի դասախոսներ Տաթևիկ Վաթյանը, Մանանա Ենոքյանը:

ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
հոգեբանության և կրթական գիտությունների
ամբիոնի վարիչ, հոգեբանական
գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Ն. Հակոբյան

Ամբիոնի վարիչ Ն. Հակոբյանի **ստորագրությունը հաստատում եմ՝**
ՀՀ ԳԱԱ գիտակրթական միջազգային կենտրոնի
գիտական քարտուղար՝ Մ. Սարգսյան